





St. Gregory the Illuminator Armenian Church Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի



Կիրակի, 3 Ապրիլ 2011 Սուրբ Պատարագ՝ կ․ա․ ժամը 10։30ին Պատարագիչ՝ ՏԷր Սարգիս Ա․ Քոնյ․ Փեթոյեան Քարոզ՝ կ․ա․ ժամը 11։30ին



Sunday, April 3, 2011
Divine Liturgy 10:30 a.m.
Archpriest Fr. Sarkis Petoyan, Pastor
Spiritual Message 11:30 a.m.



Welcome to our visitors! Our Family of parishioners joyfully invites you to make St. Gregory parish your spiritual home. Please join us for fellowship in the Yegavian Hall following services today!

2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107 ● Tel. 626-449-1523 ● Fax: 626-449-7039 E-Mail: stgregoryarmenianchurch@yahoo.com ● www.saintgregoryarmenianchurch.com



# THE MISSION STATEMENT OF ST. GREGORY ARMENIAN CHURCH



The parish of St. Gregory Armenian Apostolic Church is a fellowship of Christians committed to proclaiming Christ's Gospel of salvation through:

- 1. Worship
- 2. Education
- 3. Witness
- 4. Service
- 5. And a common life in Christ as expressed in the sacraments and heritage of the Apostles and Church Fathers. We invite you to know God through Evangelism of Orthodox Christianity, education of God's people through discipleship and demonstration of God's love through service as we strive to make Christ's presence through The Armenian Church significant in the lives of the Faithful.

#### Սբ․ Գրիգոր Լուսաւորիչ Հայց․ Եկեղեցւոյ Առաքելութիւնը

Սբ․ Գրիգոր Լուսաւորիչ Հայց․ Առաքելական Եկեղեցւոյ ծուխը յանձնառու է Քրիստոսի Փրկութեան բարի լուրը տարածելու հետեւեալ միջոցներով:

- 1. Պաշտամունքով
- 2. Ուսուցումով
- 3. Վկայութեամբ
- 4 Ծառայութեամբ
- 5. Եւ Քրիստոսի կեանքով որ նկարագրուած է խորքուրդներու միջոցաւ առաքեալներու եւ եկեղեցւոյ նայրերու կողմէ:

Մենք կը հրաւիրենք ձեզ ճանչնալու Աստուծոյ Լուսաւորչութիւնը՝ Քրիստոնէական Աւետարանչութեամբ, ուսուցանելու հաւատացեալներու Աստուծոյ սիրոյ ապացոյցը՝ ծառայութեամբ, որպէսզի Աստուծոյ ներկայութիւնը հայկական եկեղեցւոյ միջոցաւ ըլլայ յատկանշական՝ հաւատացեալներուն կեանքէն ներս:

#### ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ

Հոգեհանգստեան խնդրանքներ կ՛ընդունուին շաբթուան մինջեւ Ուրբաթ օրը:



#### Անիրաւ Դատաւորին եւ Այրի Կնոջ Առակը

Առակ մըն ալ ըսաւ անոնց այն բանի մասին, թէ իրենք ամէն ժամ պէտք է աղօթեն եւ չձանձրանան։ Ըսաւ «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար • ան Աստուծմէ չէր վախնար եւ մարդոցմէ չէր ամչնար։ Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար • որ կու գար ու կ՛ըսէր • իմ հակառակորդիս դէմ դատս տես։ Եւ դատաւորը երկար ատեն չէր ուզեր դատը տեսնել • բայց յետոյ իր մտքէն ըսաւ • թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար • բայց որովհետեւ այրի կինը զիս կը յոգնեցնէ • տեսնեմ անոր դատը • որպէսզի անընդհատ չգայ ու զիս չձանձրացնէ» • Եւ Տէրը ըսաւ • «Լսեցէք թէ ինչ կ՛ըսէր անիրաւ դատաւորը • Իսկ Աստուած արդարութիւն պիտի չընէ • իր ծառա – ներուն • որոնք գիշեր եւ ցերեկ կաղաղակեն իրեն • ան միայն համբերատար պիտի ըլլայ անոնց հանդէպ • Այո • կ՛ըսեմ ձեզի • շուտով արդարութիւն պիտի ընէ անոնց • իսկ երբ գայ մարդու Որդին՝ արդեօք հաւատք պիտի գտնէ • երկրի վրայ» •

#### Փարիսեցին եւ Մաքսաւորը

Այս առակն ալ ըսաւ ոմանց, որոնք կր պարծենային թէ արդար են իրենք եւ կ՛արհամարհէին շատերը: «Երկու մարդիկ տաճար ելան աղօթելու, մէկր Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր։ Փարիսե– ցին մէկ կողմ կեցած էր եւ ին<u>ք</u>նիրեն այս աղօթքը կ՛րնէր․ «Աստուած իմ, գոհութիւն քեզի, որ ես նման չեմ ուրիշ մարդոց, ինչպէս յափշտակողները, անիրաւներն ու շնացողները, եւ կամ ինչպէս այս մաքսաւորը, այլ շաբաթը երկու անգամ պահք կր բռնեմ եւ իմ բոլոր ստացուածքներէս տասնորդ կու տամ»։ Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած էր եւ չէր իսկ ուզեր իր աչքերը երկինք բարձրացնել , այլ կուրծքը կը ծեծէո կ'րսէր • «Աստուած, ներէ՛ ինծի՛ մեղաւորիս»։ Կ՛րսեմ ձեզի, ասիկա աւելի արդարացած իջաւ տունը, քան թէ միւսը. որովհետեւ ով որ կր բարձրացնէ իր անձր՝ պիտի խոնարհի, եւ ով որ կր խոնարհեցնէ իր անձր՝ պիտի բարձրացուի»:



#### Luke 17:20-18:14



Now He was telling them a parable to show that at all times they ought to pray and not to lose heart,

saying, "In a certain city there was a judge who did not fear God and did not respect man.

"There was a widow in that city, and she kept coming to him, saying, 'Give me legal protection from my opponent.'

"For a while he was unwilling; but afterward he said to himself, 'Even though I do not fear God nor respect man,

yet because this widow bothers me, I will give her legal protection, otherwise by continually coming she will wear me out."

And the Lord said, "Hear what the unrighteous judge said; now, will not God bring about justice for His elect who cry to Him day and night, and will He delay long over them?

"I tell you that He will bring about justice for them quickly. However, when the Son of Man comes, will He find faith on the earth?"

#### The Pharisee and the Publican

And He also told this parable to some people who trusted in themselves that they were righteous, and viewed others with contempt:

"Two men went up into the temple to pray, one a Pharisee and the other a tax collector.

"The Pharisee stood and was praying this to himself: 'God, I thank You that I am not like other people: swindlers, unjust, adulterers, or even like this tax collector.

'I fast twice a week; I pay tithes of all that I get.'

"But the tax collector, standing some distance away, was even unwilling to lift up his eyes to heaven, but was beating his breast, saying, 'God, be merciful to me, the sinner!'

"I tell you, this man went to his house justified rather than the other; for everyone who exalts himself will be humbled, but he who humbles himself will be exalted."



#### Philippians 3:1-4:9



Finally my brothers and sisters, "rejoice" in the Lord.

To write the same things to you is not troublesome to me, and for you it is a safeguard. Beware of the dogs, beware of the evil workers, beware of those who mutilate the flesh! For it is we who are the circumcision, who worship in the spirit of God and Boast in Christ Jesus and have no confidence in the flesh-even though I, too, have reason for confidence in the flesh.

If anyone else has reason to be confident in the flesh, I have more: circumcised on the eighth day, a member of the people of Israel, of the tribe of Benjamin, a Hebrew born of Hebrews; as to the law, a Pharisee; as to zeal, a persecutor of the church; as to righteousness under the law, blameless.

Yet whatever gains I had, these I have come to regard as loss because of Christ. More than that, I regard everything as loss because of the surpassing value of knowing Christ Jesus my Lord. For his sake I have suffered the loss of all things, and I regard them as rubbish, in order that I may gain Christ and be found in him, not having a righteousness of my own that comes from the law, but one that comes through faith in Christ, the righteousness from God based on faith. I want to know Christ and the power of his resurrection and the sharing of his sufferings by becoming like him in his death, if somehow I may attain the resurrection from the dead.

# ST. GREGORY ARMENIAN APOSTOLIC CHURCH

Office Hours: Tues. - Sat. 9:00 a.m. - 4:00 p.m.

Եկեղեցւոյ գրասենեակի ժամեր։

Գշ.- Շբ. 9:00 կ.ա. - 4:00 կ.ե.



#### **Фիլիպեցւոց 3:1-4:9**



Վերջապէս եղբայրնե՛րս․ ուրախացէ՛ք Տէրոջմով։ Արդարեւ նոյն բաները գրել ձեզի՝ ձանձրոյթ չէ ինծի, բայց ապահովութիւն է ձեզի։

Զգուշացէ՛ք շուներէն, զգուշացէ՛ք չար գործաւորներէն, զգուշացէ՛ք թլփատութենէն․ որովհետեւ թլփատութիւնը մե՛նք ենք, որ կը պաշտենք Աստուած Հոգիո՛վ եւ կը պարծենանք Քրիստոս Ցիսուսո՛վ․ ու վստահութիւն չունինք մարմինի վրայ․ թէեւ ե՛ս ալ ունենալու էի նոյն վստահութիւնը, մարմինի վրայ։ Եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմինի վրայ, ա՛լ աւելի ե՛ս ութերորդ օրը թլփատուած, Իսրայէլի ցեղէն, Բենիամին տոհմէն, Եբրայեցի մը՝ Եբրայեցիներէն, Օրէնքին համեմատ՝ Փարիսեցի, նախանձախնդրութեան համեմատ՝ անմեղադրելի էի։

Բայց ինչ որ շահ էր ինծի, վնաս համարեցի զայն՝ Քրիստոսի համար։ Ու նոյնիսկ բոլոր բաներն ալ վնաս կր համարեմ՝ հմ Յիսուս Stnngu Քրիստոսի Գիտութեան գերազանցութեան համար։ Բոլոր բաներէն զրկուեցայ անոր համար, եւ աղբ կր համարեմ զանոնք, որպէսզի շահիմ Քրիստոսը ու գտնուիմ իր մէջ, ունենալով ո՛չ թէ իմ արդարութիւնս՝ ու գտնուիմ իր մէջ, ունենալով ո՛չ թէ իմ արդարութիւնս՝ որ Օրէնքէն է, հապա ա՛յն՝ որ Քրիստոսի հաւատաքին արդարութիւնը՝ միջոցով է, Աստուծմէ է՝ հաւատքով․ որպէսզի ճանչնամ զինք յարութեան գօրութիւնը, ու հաղորդակից րլյամ իր չարչարաքնեռ րուն՝ կերպարանակից դառնալով իր մահուան, որպէսզի կարեռ նամ հասնիլ՝ մեռելներուն յարութեան:

#### SUPPORT ST. GREGORY ARMENIAN CHURCH VIA PURCHASING STONES

Your kind and generous donation of \$200 per stone will benefit St. Gregory Armenian Church immensely. Feel free to consult parish council members about purchasing stones.

PLEASE REMEMBER THE CHURCH IN YOUR WILL





#### The Holy Saints Forty Children of Sebastia

The Feast of the Forty Martyrs of Sebastia is celebrated each year on the Saturday following the mid point of Lent. It commemorates the lives of 40 brave youth who chose to die rather than renounce their Christian faith at a time when the spread of Christianity hung in the balance. In the first decade of the 4th Century, the Roman Emperor Licinius intensified his anti-Christian crusade, ordering renunciation of the faith by any army personnel discovered to be Christian. The investigation quickly disclosed that a battalion in Sebastia, who were recognized for their military prowess, harbored Christian sympathizers. Forty young men confirmed that they were Christian, boldly declaring that although they were faithful to the Roman King, they also would remain faithful to their Heavenly King who supplied them with hope, motivation and courage.

After various repeated attempts to convert the youth back to pagan faith, the King ordered a more severe punishment. In the heart of the winter of 316, the forty youths were left naked, neck deep in the ice-cold water of a lake. One of the forty could not endure the torture and ran out of the lake to a hot bath provided to tempt the Christians to renounce their faith. He died immediately after submersing himself in the hot water. But late that night a light shone from the heavens, forming halos over the heads of the soldiers. Seeing this, the security guards were thrown into confusion. One of them declared on the spot the undeniable truth of Christianity, and threw himself into lake in place of the apostate youth. The forty young men became the most inspiring testaments to Christianity in the East, and a church with forty cupolas in their memory could be found in Sebastia before the 14th century invasion of Tamerlane. The forty youths are remembered in various Armenian services as well as this day of commemoration.



#### Քառասուն Մանուկները Քառասուն Երիտասարդ Ջինուորները



Սբ. Քառասուն Մանուկները կ'ապրէին Սեբաստիա։ Բոլորն ալ առոյգահասակ պատանիներ էին՝ գեղադէմ, յաղթակազմ, քաջ եւ հաւատքով Քրիստոնեայ։ Այս պատճառով Հռովմէացի զօրագլուխները անոնց զինուորագրեցին արքունի գունդի մէջ։ Անոնք ալ իրենց քաջութեամբ անուանի դարձան եւ պատիւներու արժանացան։ Հակառակ որ այս քառասուն պատանիները երախտաւոր էին Հռովմէացի ինքնակալին առջեւ, ու նաեւ բոլոր իշխաններուն, Լիկիանոս Թագաւոր չհանդուրժեց անոնց Քրիստոնեայ ըլլալը, եւ հրահանգեց որ զինուրական դասին մէջ անոնք որոնք Քրիստոնեայ են հեթանոս դառնան։ Այս լուրը հասաւ քաջ պատանիներու։

Անոնք անվախօրէն եւ կամաւոր կերպով ինքզինքնին մատնեցին եւ նախընտրեցին նահատակուիլ քան հեթանոս դառնալ։ Թագաւորին հրահանգին վրայ անոնք ձերբակալուեցան եւ բանտարկուեցան։ Եւ ահա կէս գիշերին Փրկիչը անոնց երեւցաւ բանտին մէջ՝ ճառագայթով եւ ըսաւ. «Զօրացէք իմ քաջ նահատակներս, ձեր զինուորութեան սկզբնաւորութիւնը լաւ է, բայց ով որ մինչեւ վերջը կը համբերէ՝ ան պիտի ապրի եւ կենաց պսակը պիտի ընդունի»:

Այս ձայնին վրայ անոնք լեցուեցան վախով եւ ուրախութեամբ։ Քունը իրենց աչքերէն փախաւ եւ մինչեւ առտու աղօթեցին:

Այն ատեն դատաւորը հրամայեց որ քառասուն մանուկները կապեն, եւ Սեբաստիա քաղաքէն դուրս գտնուող լճակի մէջ նետեն բոլորովին մերկ, որ պաղէն սառին եւ մեռնին:

Նշանակեց պահակներ որպէսզի ոսկեն անոնց չկարենան փախչիլ։ Երեք օր անոնք մնացին սառած ջուրի մէջ։ Բայց երրորդ գիշերը լիճին վրայ յանկարծ մեծ լոյս մը ծագեցաւ, արեւի ճառագայթի նման, եւ անոր ջերմութիւնը հետզհետէ տարածուեցաւ եւ սառը սկսաւ հալիլ։ Եւ անոնք իրենց աչքերը երկինք վերցնելով, կ՛րսէին «Մեր Փրկիչը Տէր Յիսուս, անա իր լոյսը ծագեցուց, տեսնենք եւ ուրախանանը։ Մեր յոյսր Քրիստոս արեգակն է, անմարելի լոյսը»։ Սակայն մանուկներէն մէկը ելաւ լիճէն եւ բաղնիք տաքութենէն անմիջապէս մեռաւ։ Երբ պահակը այս տեսաւ, ապշեցաւ որ ինչպէս կարելի է երեսունինը ողջ մնացած են սառած ջուրի մէջ, իսկ այս մէկը վայրկեանական մահացաւ երբ ջուրէն ելաւ: Այն ատեն Տէրը անոր հոգւոյն աչքերը բացաւ, եւ մարդուն մէջ եռանդ մը եկաւ որ ինք բռնէ զրկեալին տեղը։ Ապա գնաց արթնցուց պահակները, եւ հանելով իր զգեստները ինքզինք լիճ նետեց «Ես ալ քրիստոնիայ եմ» րսելով: Այն ատեն երբ դատաւորը տեսաւ մանուկները ողջ մնացած են, հրամայեց որ լիճէն հանեն եւ չարչարելով մեռցնեն բոլորն ալ:

Այսպիսով երեսունինը մանուկները, եւ պահակը չարչարուելով իրենց հոգիները աւանդեցին Սեբաստիա քաղաքին մէջ, Մարտ ամսուն, 316 Թուականին:



## The Sunday of the Judge



The Sunday of the Judge, reminds us of the importance of prayer and of the virtues of humility, fear of God, justice and protection of the weak. The Parables of the Widow and the Judge, and the Pharisee and the Tax Collector illustrate the results of the proper practice and importance of persistent prayer with a humble heart. In the former parable, Christians, like the widow, should not give up praying to God even when facing indifference and powerful opposition. If a helpless widow wins her case by persistent pleading before a callous judge, how much will God's elect find quick justice before a loving and righteous Father? After encouraging the disciples to be persistent in prayer, in the latter parable, Jesus teaches them how to pray. This parable sharply contrasts the prayer of a Pharisee with that of a tax collector. Jesus commended the tax collector for his humble, contrite and "justified" prayer to God and contrasted that with the hypocrisy of the Pharisee's sense of self-righteousness.

### Դատաւորի Կիրակի

Մեծ Պահքին հինգերորդ Կիրակին կը կոչուի Դատաւորի։ Այդ օրուան խորհուրդը կը բացատրէ այրի կնոջ եւ դատաւորի ասին առակը (Ղուկ 18:1-5)։ Ըստ առակի՝ այրի կին մը, անդադար կը խնդրէ Աստուծմէ չերկնչող եւ մարդոցմէ չվախցող Դատաւորին որ իր դատը ընէ։ Դատաւորը կնոջմէ ազատելու համար ստիպւած կը բաւարարէ անոր պահանջքը։ Այս առակը պատմելէ յետոյ Քրիստոս կը հաւաստիացնէ ամենուն, որ եթէ անարդար դատաւորը այրի կնոջ դատը տեսաւ, ապա Աստուած առաւել եւս կը կատարէ բոլոր անոնց խնդրանքները, որոնք միշտ աղօթքով կը խնդրեն։

Առակը կը յորդորէ ամէն ժամ աղօթել, որ կը խորհրդանշէ հոգիի մշտական մղումը առ Աստուած, բայց միեւնոյն ատեն իրական աղօթքի կոչ է: Առակը պատմելէ յետոյ Քրիստոս կ՛ըսէ. «Իսկ երբ մարդու Որդին գայ, արդիօ՞ք երկրի վրայ հաւատք պիտի գտնէ (Ղուկ 18:8)։ Յիսուս կու տայ երկրորդ գալստեան գաղափարը։ ՓրկչԻ համար ցաւալի է, որ շատ մը մարդիկ կրնան ենթարկուիլ Ահեղ Դատաստանին՝ արքայութեան ժառանգորդներ րլյալու փոխարէն:



### Հոգենանգիստ/Requiem Services



- Հոգենանգստեան պաշտօն կր խնդրուի Խոսրոֆ Օնանեանի, (Իրաքի Հայկական բարեգործականի անդամ) մահուան առիթով: Խնդրողներն են՝ Օնանէս Ղարնադարեան, Ռաֆֆի եւ Լիզա Գոլսգեան, Գեղամ եւ Հուրի Իկիտպաշեան, Պէրճ եւ Գարուն Ճոնեան:
- A requiem service for Khosrof Ohanian (Iragi AGBU Member) on the occasion of his passing away is requested by Ohan Gharnagharian, Raffi & Liza Kolszian, Kegham & Houry Ikedbashian, Berj & Karoun Johnian.

#### WE REMEMBER

On the Occasion of the Feast of 40 Youth Of Sebastia

His Beatitude Abp. Torkom Manoogian Sooren & Jean Manoogian Manoug Manoogian

Mrs. H. Manoogian Avedis Manoukian Albert Manookian Rosette Manoukian

**Manoog Parikian** 

Vartouhie Manoukian **Kederian Manoug Manoug Kasparian** Zohrab Manoukian Raffi Manougian

Rita Manoukian

#### ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կր խնդրենք մեր հաւատացեալներուն մնալ եկեղեցի Կիրակի օրուան արարողութեան ընթացքին մինչեւ վերջ ի յարգանք այն ընտանիքներուն որ հոգեհանգստեան պաշտօն խնդրած են: Հոգեհանգիստը միայն խնդրողներուն համար մեր բոլոր ննջեցեալներուն համար է։ Հաճեցեք 5t. եկեղեցի մնալ մինչեւ վերջ, ստանալու համար արձակման օրինութիւնը, համբուրելով Սբ. Աւետարանը։

Հոգեւոր Հովիւ

# Փասատինայի Ս․ Գրիգոր Լուսաւորիչ Հայց․ Առաքելաքան Եկեղիցին

Սիրով կը հրաւիրէ Ձեզ

Սբ․ Գրիգոր Լուսաւորչի Մուտք ի Խոր Վիրապ Տօնի Ս․ Պատարագին Կիրակի՝ Ապրիլ 10, 2011

Պիտի պատարագէ եւ քարոզէ

Գերշն․ Տէր Յովնան Արք․ Տէրտէրեան, Առաջնորդ

Յետ Պատարաքի Սիրոյ Ճաշ պիտի մատուցուի Կիրակոս Սրահի մէջ

Մուտքո Ազատ

# St. Gregory the Illuminator Armenian Apostolic Church of Pasadena

CORDIALLY INVITES you TO COMMEMORATE

the Feast of

St. Gregory's Entrance into Khor Virab April 10, 2011

Arch. Hovnan Derderian, Primate Celebrant and Homilist

Following the Church Service An Agape Luncheon will be served in the Geragos Hall

**Entrance** is free



## 际 Առաջնորդարանի Ամառնային Բանակում 📝 Առաջին Շաբաթ Յույիս 17- էն 23



Արեւմտեան Առաջնորդարանի Ամառուայ 47-րդ Բանակումի դիմումնագրեր կարելի է ձեռք ձգել եկեղեցւու գրասենեակէն։ Բանակումը տեղի պիտի ունենայ մեր Հայ Բանակավայրին մէջ, Սիգուէայ Ազգային Անտառը, Ֆրէզնօյի մօտ։

Բանակումը տեղի պիտի ունենայ չորս տարբեր շաբաթներ՝

Առաջին շաբաթը՝ Յուլիս 17-23, Երկրորդ շաբաթը՝ Յույիս 24-30 Երրորդ շաբաթը՝ Յուլիս 31- Օգոստոս 6, Չորրորդ շաբաթը Օգոստոս 7-13

Արձանագրութիւնները մինչեւ Մարտ 31:

Դիմումնագրերը կրնաք ստանալ ամէն կիրակի եկեղեցիէն եւ կամ hyecamp.com կայքէջքէն:

## July 17 - 23 First Week of Diocesan Summer Camp

Applications are now available for the 47th Western Diocese Summer Camp, which will be held at our own Hye Camp, next to Sequoia National Forest, near Fresno.

#### There are four separate weeks of Camp

Week 1 - July 17-23

Week 2 - July 24-30

Week 3 - July 31- Aug. 6

Week 4 - Aug 7-13)

Register by March 31st. Applications are available each Sunday at Church, as well as online at hyecamp.com

> Visit our Website www.saintgregoryarmenianchurch.com



Այցելեցէք Մեր Կայքէջը www.saintgregoryarmenianchurch.com



# K St. Gregory the Illuminator Church Sunday School



### Easter Sunday April 24th

# Baked Goods & Wrapped Gifts Sale

# Enjoy baked goods and Easter eggs & candies

Which also will make a perfect gift for family & friends. All funds from the bake and wrapped gifts Sale will be going towards our Sunday School

> For more information call Marguerite Hougasian at (626) 351-8137

### Մեծ Պահոց Շրջանի Հսկումներ Եւ Uhnny Ճաշ

Մեծ Պահոց շրջանին ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին եկեղեցւոյս մէջ տեղի պիտի ունենայ հսկման արարողութիւն:

Արարողութիւնէն ետք աւանդական դարձած wwhng համեղ ընթրիքը պիտի սպասարկուի Եկաւեան սրահին մէջ։

Նուիրատութիւններ կարելի է կատարել Տիկ, Ժանէթ Գէորգեանի, Տիկ. Վարդունի Եաղլրճեանի Տիկ goũ Մէյմէրեանի միջոցաւ:.

# Սբ․ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարան

# Զատկուայ Կիրակին Ապրիլ 24, 2011

## Կարկանդակներու եւ Զատկուայ Հաւկիթներու Վաճառք

Ճաշակեցէ՛ք Զատկուայ կարկանդակները եւ հաւկիթները որոնք նոյնպէս կրնան Զատկուայ լաւագոյն նուէրը ըլլան

> Վաճառքի Հասոյթը պիտի յատկացուի Կիրակնօրեայ Վարժարանին

Յաւելեալ մանրամասնութեանց համար դիմել Օրդ-Մարկրիթ Ղուկասեանի (626) 351-8137

# REQUIEM SERVICE (HOKEHANKISD)

We ask those who wish to have hokehankisd conducted for their loved ones on a given Sunday, to please submit their names by the prior Friday for printing in the Sunday Bulletin.

# **Lenten Supper (Siro-Jash)**

As of Wedsday March 6, 2011 Vesper services (Husgoom) will be held in the church sanctuary every Wednesday at 7:00 PM, and will be followed by Lenten supper (Siro-Jash) at Yegavian Hall: To sponsor or for donations please contact Mrs. Vartouhi Yaglegian, Mrs. Jeannette Kevorkian or Mrs. Joan Meymarian.

# St. Gregory the Illuminator Armenian Apostolic Church of Pasadena

#### Men's Forum

(Ladies & Families Are Always Welcome)

# **Monthly Dinner Meeting**

Thursday, April 14, 2011 - 7:00p.m.



# Guest Speaker Dro M. Abrahamian

President, Healthcare Foundation Glendale Adventist Medical Center

Subject:

# Fundraising: Asking By Giving

#### At Yegavian Hall

St. Gregory the Illuminator Armenian Apostolic Church 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

Donation \$15


R.S.V.P. Mr. Khajag Konialian: 626-351-0216 Mr. Art Gourdikian: 626-399-1914 Church Office (Vera): 626-449-1523

Support our Organization & Church by being one our sponsors.

THANK YOU

#### **IMPORTANT NOTICE**

We kindly request that during services, the faithful remain in church following Holy Communion, as a sign of respect for the families who have requested requiem service for their loved ones. Additionally, we ask that following the final blessing, we all honor the tradition of approaching and reverently kissing the Holy Bible.





Մարդկանց Ասուլիսի Յանձնախումբ (Տիկիններուն Եւ Ընտանիքներուն Մասնակցութիւնը Միշտ Ցանկալի Է)

# Ամսական Ընթրիքի Հաւաքոյթ

Հինգշաբթի Ապրիլ 14, 2011 Ժամը 7:00-ին

Բանախօս՝

#### Դրօ Մ․ Աբրանամեան

President, Healthcare Foundation Glendale Adventist Medical Center

Նիւթ՝

# Fundraising: Asking By Giving



Up. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Եկաւեան Սրահին Մէջ 2215 E Colorado Blvd., Pasadena, CA 91107

Ընթրիքի Նուէր՝ \$15

Տեղեր ապահովելու համար հեռաձայնել՝

Պրն. Խաժակ Գոնիալեանի՝ 626-351-0216

Պրն․ Արտաշ Կուրտիքեանի՝ 626-399-1914

Եկեղեցւոյ գրասենեակ «Վերային»՝ 626-449-1523

Կը խնդրենք որ քաջալերեք մեր կազմակերպութիւնն ու եկեղեցին՝ րլլալով մեր հովանաւորներէն մէկր:

Շնորհակալութիւն







Archpriest Fr. Sarkis Petoyan and the Parish Council of
St. Gregory Armenian Church
Prayerfully Invite you to Attend
All Lenten Husgoom Prayer Vigils

Wednesday, April 6 7:00 p.m. Wednesday, April 13 7:00 p.m.

All services will be conducted in Armenian and English, using our state-of-the-art user-friendly service books for what will be an enriching and spiritually-rewarding experience.

You are encouraged to remain for a fellowship supper in the Yegavian Hall.

Տէր Սարգիս Աւագ Քոյն․ Փեթոյեան եւ Սբ․ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Անդամները

Միասնաբար կը հրաւիրեն ձեզ ներկայ գտնուելու Հսկումի բոլոր արարողութիւններուն

Չորեքշաբթի, Ապրիլ 6, 2011 Երեկոյեան ժամը 7ին Չորեքշաբթի, Ապրիլ 13, 2011 Երեկոյեան ժամը 7ին

Բոլոր արարողութիւնները պիտի ըլլան Հայերէն եւ Անգլերէն լեզուներով հետեւելով Հսկումի արդիական եւ հոգեպարար նոր ժամագրքին:

Հսկումէն վերջ բոլորդ հրաւիրուած եք աւանդական դարձած պահոց համեղ ընթրիքին Եկաւեան սրահին մէջ:

### St. Gregory the Illuminator Armenian Church, Pasadena Tel: 626-449-1523, Fax: 626-449-7039

Email: stgregoryarmenianchurch@yahoo.com

St. Gregory mailing list needs your updates.

Please complete and mail it back to the church office at:

2215 E Colorado Blvd., Pasadena, CA 91107



### St. Gregory Armenian Church



# **Parish Directory**

Parish Council
Ladies Society Joan Meymarian 626 794 6771
Men's Forum
Friendship Club
A.C.Y.O SeniorsSebouh Kouyoumjian626 715 0124
Choir Director
Hovsepian School Office
Hovsepian School
Saturday SchoolKarnig Chavdarian626 446 33 77
Sunday SchoolMarguerite Hougasian626 351 81 37
This Week
Wed 4/6/2011 St. Gregory Friendship Club Luncheon 12:00pm
Sat 4/9/2011St. GregorySaturday School 10:00am
Sun 4/10/2011 . St. Gregory Sunday School
Sun 04/10/2011. Archbishop Hovnan Derderian - Celebrant10:30a.m
Sun 04/10/2011. Archbishop Hovnan Derderian - Celebrant 10:30a.m  Coming Events

#### **FELLOWSHIP HOURS**

Wed 4/27/2011 St. Gregory Ladies Luncheon . . . . . . . . . . 12:00pm Sat 5/7/2011 . . St. Gregory Hovsepian School mother's Day11:00am

(Coffee Hour)

Families and individuals are encouraged to host the fellowship for happy or otherwise solemn occasions. Please contact church office.

Today's Fellowship Hour is Sponsored by Mrs. Isgouhie Mankerian



#### **ATTENTION!**



Parishioners and Friends of St. Gregory Church may sponsor the weekly issue of the Sunday Bulletin. For details, please contact the parish office at 626-449-1523.



#### ՈՒՇԱԴՐՈՒԹԻԻՒՆ

Ս․ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխականներն ու Բարեկամները կընան Ռովանաւորել Եկեղեցւու շաբաթական թերթիկը Մանրամասնութիւններու համար հեռաձայնել եկեղեցւոյ Գրասենեակը՝ 626-449-1523 թիւով

### St. Gregory Armenian ChurchHall Rentals

Եկեղեցւու «Կիրակոս» եւ «Եկաւեան» Սրահները Տրամադրելի են Ձեր Բոլոր Առիթներուն

Yegavian and Geragos Halls are available for your

**Weddings** 

Baptism

Birthdays

**Anniversaries** 

Հարսանիքներ

**Կնունքներ** 

Տարեդարձներ

Հոգեճաշեր

Hokejash and any other occaion Եւայլն

For more info, please call:

Vahe Charkhutian 562-715-8730.

Մանրամասնութեան Համար Հեռաձայնել՝ Վահէ Չարխըթեանին՝ 562-715-8730 թիւով